



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

ՈՐՈՇՈՒՄ

« 28 » « դեկտեմբեր » 2023թ.
ք.Արմավիր

ՆՄՈ/ 956 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N ՄՈ/870-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1863-Ն որոշման N 2 հավելվածը , ուսուցիչների հավելավճարները վճարելու նպատակով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Գումար հատկացնելու մասին» N ՄՈ/870-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
 - 1) որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝ «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 17 085 600

(տասնյոթ միլիոն ութսունհինգ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 13 996 211 (տասներեք միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար երկու հարյուր տասնմեկ) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության թվով 9 (ինը) հանրակրթական դպրոցներին՝ համաձայն հավելվածի».

- 2) որոշման 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.
- 3) որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ՝ «2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ՝ Ա. Հովհաննիսյանին «Հանրակրթության ծրագիր» ծրագրի «ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման նախկինում կնքված պայմանագրերում կատարել համապատասխան փոփոխություններ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ⓧ Недействительная подпись

X *Edvard Hovhannisyanyan*

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



Հավելված

ՀՀ Արմավիրի մարզպետի
2023 թվականի հոկտեմբերի 28-ի

—ի

ՆՄՈ/ 956-Ա որոշման

« Հավելված

ՀՀ Արմավիրի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 25 -ի
ՆՄՈ/ 870-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ «ՀՀ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԻՆՁԱ 100 ԱՇԱԿԵՐՏ
ՈՒՆԵՅՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԴԱՍԱԿԱՆԴՈՂ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2023
ԹՎԱԿԱՆԻՆ «ԱՅԼ ՆՊԱՍՏՆԵՐ ԲՅՈՒՋԵԻՑ» ՀՈԴԿԱԾՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ
ՎԵՐԱԲԱՇԽՄԱՆ

h/h	դպրոցի անվանումը	ՀՀ դրամ
1	2	3
1	Արգինայի միջնակարգ դպրոց	1328779
2	Արտամետի միջնակարգ դպրոց	1827000

3	Արևադաշտի միջնակարգ. դպրոց	2417927
4	Բաղրամյանի/ Բաղրամյան/ միջնակարգ դպրոց	2412497
5	Երվանդաշատի միջնակարգ դպրոց	1829795
6	Հուշակերտի միջնակարգ. դպրոց	1363377
7	Տալվորիկ հիմնական դպրոց	564545
8	Լեոնամերձի հիմնական դպրոց	988859
9	Ֆերիկի հիմնական դպրոց	1263430
Ընդամենը		13996211

»:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

XI 12 0 2023

VERIFIED OCSP 28.12.2023 12:08:51 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023